Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 15 -ի N 393 - Ա որոշման

Ծրագիր

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լվացքատան կառուցում

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կառուցել լվացքատուն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի: հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	88,221,640 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, Հավատացյալ ժողովուրդ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	22 հուլիս, 2020 թ.- 10 մարտ, 2021 թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինան-սական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կատարել լվացքատան կառուցման աշխատանքներ, որի ընդհանուր գումարը 88,221,640 դրամ: Աշխատանքներն իրականացվելու են «Լիվասա» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ, ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ., 14 շենք, ՀՎՀՀ 02236972), պայմանագիր N 26Շ/019՝ կնքված 3 փետրվար, 2020 թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 22 հուլիս, 2020 թ.- 10 մարտ, 2021 թ:

10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարածքում կատարել լվացքատան կառուցման աշխատանքներ, որի ընդհանուր գումարը 88,221,640 դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 22 հուլիս, 2020 թ.- 10 մարտ, 2021 թ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ